ԵՐԵՒԱՆԻ ԽԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅ ՄԵԼԻՔՆԵՐԸ ԺԹ. ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՇՈՒՐՋ ՌՈՒՍ-ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՍՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Քրիստինէ Կոստիկեան

ԺԹ. դարի սկզբին Հարաւային Կովկասի շուրջ ռուս-իրանական հակամարտութեան սրման ու պատերազմական բախումների ընթացքում տեղի հայ բնակչութիւնն իր աշխարհիկ ու հոգեւոր առաջնորդների գլխաւորութեամբ ներքաշւում է Ռուսաստանի եւ Իրանի իշխանութիւնների քաղաքական պայքարի մէջ: Կեղծ խոստումներով ու սիրաշահող քայլերով վերջիններս ջանում էին իրենց կողմը գրաւել հայերին՝ ռազմական բախումների ընթացքում նրանց նիւթական ու մարտական աջակցութիւնը ստանալու նպատակով: Հայ ժողովրդի ազատագրութեան յոյսերը կապելով Ռուսաստանի հետ՝ Ղարաբաղի ու Երեւանի հայ մելիքներից շատերը լայն աջակցութիւն էին ցուցաբերում ցարական իշխանութիւններին:

Նշուած ժամանակահատուածում Ռուսաստանը, ակտիւօրէն իրականացնելով իր նուաճողական ծրագրերը Հարաւային Կովկասում, Արեւելեան Վրաստանի հետ իր իշխանութեան տակ է առնում նաեւ Երեւանի խանութեան հիւսիսային տարածքները՝ ներառեալ Լոռու, Փամբակի, Բորչալուի, Ղազախի ու Շամշադինի շրջանները: Աղա Մուհամմադ խանի 1795 թ. արշաւանքի հետեւանքով բաւականին նօսրացած բնակչութիւն ունեցող այս շրջանների վերաբնակեցման հարցը Հարաւային Կովկասի ռուսական վարչութեան ուշադրութեան կենտրոնում էր, եւ այդ նպատակով այստեղ տարածքներ են յատկացւում Ղարաբաղից իրենց հպատակների հետ հեռացած հայ մելիքներին: Ռուսաստանի կայսր Պաւել Ա.ի եւ Վրաց թագաւոր Գէորգի ԺԲ.ի հրամանագրերով Մելիք Աբովին յանձնւում է Բոլնիսի գաւառը, Մելիք Ֆրիդունին՝ Աղջակալան եւ Բորչալուի մի մասը, իսկ միւս մասը եւ Լոռին տրւում են Մելիք Ջումշուդ Մելիք-Շահնազարեանին[1]: Վերաբնակիչների հաստատումն իրենց յատկացուած տարածքներում սակայն հարթ չի ընթանում՝ հանդիպելով տեղի ազնուականութեան ներկայացուցիչների դիմադրութեանը: Այս կապակցութեամբ Մելիք Ջումշուդը Պ. Կովալենսկուն ուղղուած 1800 թ. իր մի նամակում հայցում է ռուս իշխանաւորի կարգադրութիւնը, որ իր հետ գաղթած ժողովուրդն իր ենթակայութեան տակ գտնուի. «որպէս եւ բնականապէս կանոնեցեա կայ ի մէջ, որ ոչ ոք մէլիք չի կարող միւս մէլիքի սեփական ժողովրդոցն ձեռնամուխ լինել: Եւ վասն միւս ժողովրդոցն հրամայեա պարոն Կարապետին եւ միոյ քահանայի, զի զայնս աստուածակոյս կողմանէ կարգաւորեսցեն ի մէջ մեր սիրով խաղաղութեամբ»[2]: 1804 թ. ռուսների երեւանեան առաջին արշաւանքից յետոյ Լոռու, Փամբակի եւ Բորչալուի շրջաններ է բերւում շուրջ 2000 հայ ընտանիք[3]: Այս շրջաններում հաստատուած, այդ թւում նաեւ հայ մելիքների հետ եկած վերաբնակիչների դրութիւնը բաւականին ծանր էր. այնպէս որ, նրանց մի մասն իրենց իսկ կամքով, ինչպէս նաեւ ռուսական իշխանութիւնների ցուցումներին համապատասխան, կարճ ժամանակ անց տեղափոխւում է Ելիսաւետպոլի (կամ Գանձակի) նահանգ[4]: Այնտեղ է հաստատւում նաեւ Մելիք Ջումշուդ Մելիք-Շահնազարեանը իր հպատակների հետ[5]: Նա ռուս-պարսկական պատերազմի յետագայ շրջանում աչքի է ընկնում Իրանի դէմ ռուսական զօրքի հետ մղուած կռիւներում եւ արժանանում է ռուսական իշխանութեան պարգեւներին[6]:

Եթէ Արցախի հայ մելիքները վճռական էին իրենց ռուսական կողմնորոշման հարցում եւ դեռեւս ԺԸ. դարում բազմիցս փորձում էին խաների դէմ պայքարում յենուել Ռուսաստանի աջակցութեան վրայ, ապա նոյնը չի կարելի ասել Երեւանի խանութեան հայ մելիքների մասին: Այստեղի մելիքները հիմնականում աւելի զգուշաւոր էին, խուսափում էին ռազմական պայքարից եւ գերադասում էին բարիդրացիական յարաբերութիւններ ունենալ տեղի եւ Իրանի մահմեդական իշխանութիւնների հետ: Այս առումով յատկանշական է, որ գիտակցելով ռազմական գործողութիւնների ծանր հետեւանքները խաղաղ բնակչութեան բնականոն կեանքի վրայ՝ Երեւանի Աբրահամ Մելիք-Աղամալեանը եւ իւզբաշի Գաբրիէլ Գեղամացին գրաւոր դիմում են յղում Մելիք Ջումշուդ Մելիք-Շահնազարեանին՝ միջնորդելու, որ Ցիցիանովը հաշտութիւն կնքի Երեւանի խանի հետ «ոյր չելինի թէ այս երգիրս էլ Ղարաբաղու նման քրիստոնէից աւերումն լինի»[7]:

Արցախի հայ մելիքների մեծ մասի ակնյայտ ռուսական կողմնորոշումը վտանգում էր ռազմական հարցերում մինչ այդ որեւէ կերպ աչքի չընկնող Երեւանի հայ մելիքների ու հասարակ ժողովրդի կեցութիւնը: Միաժամանակ պէտք է հաշուի առնել, որ զգալի թուով հայ զինուորներ կային Երեւանի բերդը պաշտպանող կայազօրում[8], եւ նրանց ղեկավարների դիրքորոշումը կարող էր վճռական դեր խաղալ բերդի համար մղուող մարտերում: Այս հարցում բնորոշ օրինակ է Երեւանի Մուհամմադ խանի վերաբերմունքը հայ հարիւրապետ Գաբրիէլ Գեղամացու նկատմամբ: Գանձակի բերդի 1804 թ. գրաւումից յետոյ լուրեր ստանալով ռուսների կողմից դէպի Երեւան նախաձեռնուող արշաւանքի մասին, Երեւանի Մուհամմադ խանը կարգադրում է խեղդամահ անել Գաբրիէլ Գեղամացուն: Դա, սակայն, յաջողւում է կանխել վերջինիս որոշ բարեկամների միջնորդութեամբ[9]: Ինչպէս յետագայ փաստերն են ցոյց տալիս, անհիմն չէին տեղի խանի ու իրանական հրամանատարութեան կասկածները հայերի հաւատարմութեան վերաբերեալ: Պահպանուել են Երեւանի մելիք Աբրահամի եւ Գաբրիէլ իւզբաշու նամակները ռուսական իշխանութիւններին՝ նրանց աջակցելու իրենց պատրաստակամութեան մասին վստահեցումներով, նաեւ իրանական կողմի ռազմական համալրումների ու այլ գործունէութեան վերաբերեալ տուեալներով[10]: Իսկ այն մասին, որ Երեւանի Մուհամմադ խանը լաւատեղեակ էր Գաբրիէլ Գեղամացու քաղաքական կողմնորոշմանը, փաստում է Եգոր Խուբովը՝ նշելով, որ խանը իր եւ Գաբրիէլի միջոցով էր կապ-

1 *Армяно-русские отношения*, т. 4, сост. А. В. Алексанян, В. М. Мартиросян, М. Г. Нерсисян, П. А. Чобанян, Ереван, 1990, д. 370, с. 527. Այս մասին տե՛ս նաեւ *Արցախի մելիքութիւնները եւ մելիքական տները XVII-XIX դդ.*, Երեւան, 2007, էջ 94:

2 *Присоединение Восточной Армении к России*, ред. Ц. Агаян, т. 1, Ереван, 1972, с. 40.

3 **Վ. Ա. Դիլոյեան**, *Արեւելեան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամեակին եւ հայ-ռուսական յարաբերութիւնները*, Երեւան, 1989, 38-39:

4 **Վ. Դիլոյեան**, նշ. աշխ., էջ 44:

5 *Присоединение Восточной Армении к России*, т. 1, с. 310, 399.

6 Նոյն տեղում, էջ 401, 648.

7 Նոյն տեղում, էջ 172:

8 *Акты, собранные Кавказской археографической комиссией (АКАК)*, т. I, Тифлис, 1866, с. 118:

9 **Վ. Դիլոյեան**, նշ. աշխ., էջ 133:

10 АКАК, т. II, Тифлис, 1868, док. 1205, 1256, с. 604, 626.

digitised by © National Library of Armenia A.R.A.R.@

ւում Կովկասի ռուսական իշխանութիւնների հետ Ռուսաստանի հպատակութիւնն ընդունելու և նրանից Իրանի դէմ օգնութիւն ստանալու ակնկալիքով[11]: Իրանի դաշնարական իշխանութիւնները չվստահելով բերդի հայ պաշտպաններին՝ բերդի կայազօրի մէջ ներդրաւում են Քերմանի հետեւակազօրայիններին[12]:

Հայ մելիքների դրութեան անկայունութիւնը Երեւանի խանութիւնում դրդում է նրանցից մի քանիսին դիմել Կովկասի ռուսական իշխանութիւններին՝ իրենց ենթակայ տարածքներում, յատկապէս՝ Գանձակի խանութիւնում հողեր յատկացնելու խնդրանքով: Նման դիմումներով հանդէս են գալիս Երեւանի մելիքներ Աբրահամ ու Սահակ Աղամալեանները, Օհաննէս, Գաբրիէլ եւ Ալլահվերդի իւզբաշիները[13]: Կովկասի ռուսական հրամանատարութեան յետագայ գրագրութիւնից յայտնի է դառնում 1807 թ., իրենց կողմից ներկայացուած դիմումներին համապատասխան, Գաբրիէլ եւ Օհաննէս Իւզբաշի Գեղամեաններին Ելիսաւետպոլի նահանգում բնակութեան վայր տրամադրելու մասին[14]:

Մատենադարանի արխիւային ֆոնդերում պահպանուած պարսկերէն վաւերագրերը ցոյց են տալիս, որ իրանական իշխանութիւններն իրենց հերթին ջանում էին իրենց կողմը գրաւել հայ ազնուականներին եւ յատուկ արտօնութիւններով խրախուսում էին իրենց նկատմամբ հաւատարմութիւն ցուցաբերած հայ հողատէրերին ու վաճառականներին:

ԺԹ. դարի սկզբի հայերէն ու ռուսերէն փաստագրական նիւթերում պահպանուել են Շամշադինում ու Ղազախում գտնուող քալանթար[15] Յովհաննէսի կողմից 1805 թ. Լ. Էրիսթովին գրուած նամակներ, որոնցում նա իր մտահոգութիւնն է յայտնում ռուս-իրանական բախումների արդիւնքում Երեւանի խանութեան բնակչութեանը՝ թէ՛ հայերին ու թէ՛ այլազգիներին, հասցուող վնասների մասին[16]: Նամակներից մէկում նշւում է նաեւ, որ պարսիկները Փիր Ղուլի սարդարի գլխաւորութեամբ մտել են Ղզղալա, որտեղ Յովհաննէս քալանթարն էր, ապա նրանից պահանջել են ներկայանալ թագաժառանգ Աբբաս Միրզային, որպէսզի վերջինս նրան խալ՚աթով[17] պատուի, եւ մօտակայ տարածքում գտնուող միւս հայ գեղջուագների հետ տարել են Երեւան[18]: Կարծում ենք, որ թերեւս այս անձին է տրուած եղել Աբբաս Միրզայի 1808 թ. հրամանագիրը, որով Մելիք Յովհաննէսը նշանակւում էր Երեւանի ու Նախիջեւանի հայութեան մելիք, եւ համապատասխանաբար կարգադրւում էր Հուսէյն խան սարդարին նրան յիշեալ շրջանների հայութեան մելիք ճանաչել: [19]Հրովարտակի բովանդակութիւնից պարզ է, որ վերոյիշեալ Մելիք Յովհաննէսը ազնուականական տոհմից էր, վայելում էր իրանական իշխա-

11 Хубов Е., Описаніе достопамятныхъ произшестій въ Арменіи, Санктпетербург, 1811, сс. 7, 22:

12 عبد الرزاق مفتون دنبلی، مآثر سلطانیه، تهران، 1351، ص. 116.

13 АКАК, т. III, Тифлис, 1869, док. 441, 817, с. 236-7, 443.

14 *Присоединение Восточной Армении к России*, т. 1, д. 374, с. 425.

15 Քալանթար (کلانتر) էին կոչւում քաղաքների կամ քաղաքային խոշոր թաղամասերի աշխարհիկ ղեկավարները, որոնք զբաղւում էին բնակչութեան քաղաքացիական հարցերով եւ հետեւում քաղաքի հասարակական գործերին: Սրանք սովորաբար ընտրւում էին քաղաքի մեծահարուստ վաճառականների շարքերից (Ե. Փափազեան, *Մատենադարանի պարսկերէն հրովարտակները*, պրակ Ա, Երեւան, 1956, էջ 122):

16 *Присоединение Восточной Армении к России*, т. 1, д. 257, сс. 322-3, д. 266, сс. 328-9.

17 Խալաթ (خلعت) - Հիւրասիրութեան եւ կամ զանազան տօների առթիւ կազմակերպուած ընդունելութիւնների ժամանակ յարգանքի ու մեծարման նպատակով տրուող մեծարժէք նուէր, որը մեծ մասամբ լինում էր շքեղ եւ թանկագին հագուստ:

18 *Присоединение Восточной Армении к России*, т. 1, д. 266, сс. 328-9.

19 Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 1ը, վաւ. 1504:

նութիւնների վստահութիւնը, եւ նրան որոշակի դեր էր վերապահուած Երեւանի հայ բնակչութեան վերաբերութեամբ. «[1808 թ.] տարուայ սկզբից Երեւանի ու Նախիջեւանի հայութեան մելիքութիւնը վերոյիշեալին յանձնեցինք, որպէսզի ամենայն ջանասիրութեամբ, խնամքով ու զգօնութեամբ պաշտպանի նրանց ու հաւաքի ցաքուցրիւ եղածներին՝ դրսեւորելով իր հաւատարմութիւնն ու նուիրուածութիւնն [շահական] ամենալուսաւոր մտքին: Եւ թող ստանայ հարկերը, որ նրան էին յատկացուած եղել մշտապէս եւ ժառանգաբար՝ ծախսելով դրանք իր ապրուստի ու կարիքների համար»:

1813 թ. կնքուած Գիւլիստանի հաշտութեան պայմանագրով Իրանի ու Ռուսաստանի միջեւ սահմանը, սկսուելով արեւմուտքում Շորագեալի շրջանից, ձգւում էր նրան կից Փամբակի, Ղազախի, Շամշադիլի եւ Ելիսաւետպոլի շրջաններով, այնուհետեւ՝ շարունակւում Ղարաբաղի խանութեան սահմանագծով եւ աւարտւում Արաքս գետի մօտ[20]: Այս պայմանագրի թերի կողմերից էին սահմանների վերաբերեալ ոչ յստակ ու վիճայարոյց ձեւակերպումները, որոնք յետագայում կողմերի միջեւ երկարատեւ վիճաբանութիւնների միջեւ դառնում եւ այդպէս էլ լուծում չստանալով՝ յանգեցնում նոր պատերազմի բռնկմանը:

Կովկասի կառավարչապետ Ա. Պ. Երմոլովը 1820 թ. սահմանային վէճերի կապակցութեամբ իր գրած մի նամակում հաստատում է, որ պարսիկները ջանում են ստանալ մի տարածք Փամբակի շրջանում, որպէսզի կապ ունենան Ռուսաստանի տիրապետութեան տակ անցած «թաթարների» հետ, ինչը նա անթոյլատրելի է համարում սահմանների պահպանութեան տեսանկիւնից: Բացի այդ, պայմանագրով Իրանին էր պատկանում Շամշադիլի դիստանցիայի ու Սեւանայ լճի միջեւ գտնուող մի անբնակ տարածք, որը ռուսահպատակ «թաթարների» քոչավայրն էր եւ հակառակորդ կողմի քոչուորների հետ հանդիպման վայրը: Այստեղ դաւեր էին նիւթւում ռուսական իշխանութիւնների դէմ: Երմոլովն առաջարկում էր Ռուսաստանին պահել այս երկու տարածքները՝ փոխարէնը Իրանին յանձնելով Կապան-չայ եւ Կապանակ-չայ գետերի միջեւ ընկած տարածքը[21]: Սահմանների հարցը կարգաւորելու նպատակով կողմերը 1823 թ. անգամ որոշում են իրենց ներկայացուցիչների մասնակցութեամբ յանձնաժողով ստեղծել եւ սահմանների յստակեցման հարցում փոխհամաձայնութեան գալ[22]: Ռուսական իշխանութիւնները յանձինս Կովկասի կառավարչապետ Ա. Պ. Երմոլովի մինչեւ իսկ պատրաստակամութիւն են յայտնում զիջելու Շորագեալի շրջանից մի զգալի մաս[23]: Այնուամենայնիւ, կողմերը փոխհամաձայնութեան չեն գալիս:

Ինչպէս ստորեւ կը տեսնենք, առաջին եւ երկրորդ ռուս-պարսկական պատերազմների միջեւ ընկած ժամանակամիջոցում (1813-1826 թթ.) դաշնարական իշխանութիւնները հրապարակում են հայ մելիքներից մի քանիսի իրաւունքները հիմնականում վիճելի տարածքներում հաստատող հրամանագրեր՝ ջանալով այդկերպ ամրապնդել իրանական կողմի դիրքերն այս վայրերում:

Մինչեւ 1805 թ. Երեւանի խանութեան մէջ էր գտնուում Շորագեալի սուլ-

20 АКАК, т. VI, ч. II, Тифлис, 1875, с. 141.

21 АКАК, т. VI, ч. II, с. 228.

22 АКАК, т. VI, ч. II, дд. 517-9, 521, 524, с. 277-282 եւ այլն:

23 Այդ մասին նշւում է գեն.-լէյտ. Վելեամինովի կողմից 1824 թ. թագաժառանգ Աբբաս Միրզային յղուած մի նամակում (АКАК, т. VI, ч. II, д. 589, с. 328):

digitised by © National Library of Armenia A.R.A.R.@

թանութիւնը[24], որն այդ թուականին գրաւուում է ռուսական զօրքերի կողմից եւ միացուում Ռուսաստանին[25]: Շորագեալի գաւառի միացումը Ռուսաստանին հաստատուում է առաջին ռուս-պարսկական պատերազմի աւարտին կնքուած Գիւլիստանի հաշտութեան պայմանագրով, սակայն, ինչպէս վերը նշեցինք, այն հակամարտ կողմերի միջեւ վիճելի տարածքներից էր: Երեւանի Հուսէյն խանի 1811 թ. եւ թագաժառանգ Աբբաս Միրզայի 1812 թ. հրամանագրերով Մնացականի որդի Յարութիւնի որդի Կարապետ Աղան, ով շահին հաւատարիմ հայ ազնուականներից էր, իր ծառայութիւնների դիմաց ազատուում է Շորագեալում գտնուող իր կալուածքների համար մի շարք հարկերի վճարումից[26]: Աղա Կարապետի յիշեալ իրաւունքը հաստատուում է նաեւ Ֆաթհալի շահի 1820 թ. սեպտեմբերի հրամանագրով[27]: 1817 թ. ռուսական հրամանատարութեան տուեալներով ռուս-իրանական առաջին պատերազմի ընթացքում Շորագեալի բնակչութեան թիւը խիստ նուազել էր նախապատերազմեան 1000 ընտանիքից հասնելով 200-ի[28]: Ակներեւ է, որ շահական իշխանութիւններն իրենց այս քայլով ազատում էին հայ մելիքին ու նրան ենթակայ շրջանը Իրանի հանդէպ հարկային պարտաւորութիւններից եւ թերեւս այդկերպ արտօնեալ պայմաններով փորձում խրախուսել նրան ունենալու իրանական կողմնորոշում:

Իր շահերից ելնելով՝ իշխանութիւնն անգամ փորձում է վերակենդանացնել արդէն քաղաքական ասպարէզից դուրս եկած Սիւնիքի Օրբէլեանների եւ Գեղարքունիքի Մելիք-Շահնազարեանների ազնուականական տոհմերը՝ կալուածքներ շնորհելով այդ տոհմերից սերած իրենց յարմար թեկնածուներին: Այսպէս, Ֆաթհալի շահի 1813 թ. յունիսի հրամանագրով հաստատուում են Սամ Բեկի որդի Պետրոս Օրբէլեանի ժառանգական իրաւունքները Սիւնիքի Ամաղու գիւղի եւ Նորավանքի նկատմամբ[29]:

Նոյն պատճառներով 1824 թ. թագաժառանգ Աբբաս Միրզայի եւ երկու տարի անց Ֆաթհալի շահի հրամանագրերով Գեղարքունիքի մի շարք գիւղերի նկատմամբ կալուածատիրական իրաւունքը յանձնուում է Դաւիթ Մելիք-Շահնազարեանին[30]: Վերջինս եղել էր Ֆաթհալի շահի բանագնացը Նապոլէոնի հետ բանակցութիւններում, գտնուել էր Իրանում պետական ծառայութեան մէջ՝ վարելով թարգմանչի պաշտօն, ստացել էր «խանի» տիտղոսը[31]: Իր խնդրանքին համապատասխան՝ թագաժառանգ Աբբաս Միրզայի 1818 թ. հրամանագրով նա ազատուում է պետական ծառայութիւնից[32], որից յետոյ փորձում է

24 Սուլթանն իշխանական աստիճանակարգում յաջորդում էր խանին, իսկ նրանց յաջորդում էին մինբաշիները, ապա՝ իւզբաշիները: Սուլթանին ենթակայ տարածքը համապատասխանաբար կոչւում էր սուլթանութիւն:

25 *Հայ ժողովրդի պատմութիւն*, հտ. V, Երեւան, 1974, էջ 14, 121:

26 Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 1գ, վաւ. 1018, 1022:

27 Նոյն տեղում, վաւ. 1024, տե՛ս պատկեր 1:

28 ԱԿԱԿ, т. VI, ч. II, с. 142.

29 Այս հրովարտակի բնագիրը տե՛ս **Ք. Կոստիկեան**, *Սիւնիքի Օրբէլեանները XVIII-XIX դարերում*,- Մերձաւոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ, XIX, Երեւան, 2000, էջ 70-78:

30 Մատենադարան, Մելիք-Շահնազարեանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վաւ. 43, 44. Կաթողիկոսական դիւան, թղթ. 1ե, վաւ. 701: Այս մասին աւելի մանրամասն տե՛ս **Ք. Կոստիկեան**, *Գեղարքունիքի Մելիք-Շահնազարեանների պատմութիւնից*,- Մերձաւոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ, XXIV, Երեւան, 2005, էջ 303-329:

31 **Գ. Ներմազանեան**, *Նիւթեր ազգային պատմութեան համար. Երեւելի հայկազունք ի Պարսկաստան*, Ռոստով, 1890, էջ 122:

32 Այդ հրամանագրի պատճէնը տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 1ը, վաւ. 1560:

տէր դառնալ պապենական ժառանգութեանը Գեղարքունիքում:

Յիշեալ հրամանագրերը տրւում են հէնց այն շրջանում, երբ Գեղարքունիքի ու Սաղարաքի կապակցութեամբ տարածքային վէճեր էին ընթանում Իրանի եւ Ղարաբաղում ու Վրաստանում հաստատուած ռուսական իշխանութիւնների միջեւ[33]: Հետեւաբար, իրենց այս քայլով շահական իշխանութիւնները ցանկանում էին, Դաւիթ Մելիք-Շահնազարեանի միջոցով իրենց հսկողութեան տակ առնել Գեղարքունիքի վիճելի տարածքների մի մասը:

Բնականաբար, նման պայմաններում Դաւիթ Մելիք-Շահնազարեանի յաւակնութիւնները չէին կարող խրախուսուել ցարական իշխանութիւնների կողմից: Պահպանուել են 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի շրջանի մի շարք փաստաթղթեր, որոնք վկայում են Եփրեմ կաթողիկոսի օրօք Էջմիածնի պարտքերի զեղչման նպատակով հայ բարձրաստիճան հոգեւորականների ու պարսից իշխանութիւնների միջեւ վարուող բանակցութիւններում Դաւիթ Մելիք-Շահնազարեանի՝ որպէս միջնորդ հանդէս գալու մասին[34]: 1828 թ. Ռուսաստանի տիրապետութեան տակ անցած Երեւանի նահանգի նոր իշխանութիւնները, բնականաբար, չէին նեցող հայ ազնուականներին: Զարմանալի չէ, որ Դաւիթ Մելիք-շահնազարեանի մելիքական իրաւունքները կովկասի ռուսական իշխանութիւններն այդպէս էլ չեն հաստատում: Չնայած Ռուսաստանի հպատակութիւնն ընդունելուն, երկարատեւ յամառ պայքարին ու դատական քաշքշուկներին, Դաւիթ Մելիք-Շահնազարեանին չի յաջողուում տէր դառնալ իր պապենական կալուածքներին[35]:

Երեւանի հայ մելիքներից Մելիք Սահակի քաղաքական կողմնորոշման վրայ ազդելու նպատակով է տեղի ունենում Իրանում շահի հովանաւորութեան ներքոյ գտնուող վրաց արքայորդի Ալեքսանդր Միրզայի եւ Երեւանի յիշեալ մելիքի դստեր՝ Մարիայի ամուսնութիւնը: Մելիք Սահակ Աղամալեանը տուեալ ժամանակաշրջանի Երեւանի խանութեան ազդեցիկ անձնաւորութիւններից մէկն էր, որը մեծ հեղինակութիւն էր վայելում նաեւ Երեւանի սարդարի ու իրանական իշխանութիւնների շրջանում[36]: Իրանի թագաժառանգ Աբբաս Միրզան հիջրայի 1234 թ. (1818/9 թ.) եւ 1235 թ. (1819/20 թ.) իր հրամանագրերով առաջարկում է Եփրեմ կաթողիկոսին քրիստոնէական օրէնքներով թոյլատրել նրանց ամուսնութիւնը եւ կատարել պսակադրութեան արարողութիւնը[37]: Պահպանուել է նաեւ Երեւանի խան Հուսէյն սարդարի նամակը, որով տեղեկացնում է Եփրեմ կաթողիկոսին Մելիք Սահակի դստերը վրաց արքայորդի Ալեքսանդր Միրզայի հետ ամուսնացնելու մտադրութեան եւ այդ կապակցութեամբ հրապարակուած թագաժառանգի հրամանագրի մասին: Նշւում է, որ կաթողիկոսը կարող է դա իրականացնել մօտակայ յարմար ժամանակահատուածում[38]: Չնայած այն հանգամանքին, որ Մելիք Սահակ Աղամալեանը Երեւանի Հուսէյն Ղուլի խան սարդարի մերձաւոր պաշտօնեաներից էր եւ խանութեան հայկական հետեւակազօրի

33 *Кавказский сборник*, т. 21, Тифлис 1900, с. 1-2, 12, 14-42.

34 Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 1ե, վաւ. 730, 731, 742, 745:

35 **Ք. Կոստիկեան**, *Գեղարքունիքի Մելիք-Շահնազարեանների պատմութիւնից*, էջ 306:

36 **R. Hewsen**, *The Meliks of Eastern Armenia*, VI,- The House of Ałamaleanc,- «Բազմավէպ», 1984, թ. 3-4, էջ 323:

37 Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 1ե, վաւ. 680, 682:

38 Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 1ը, վաւ. 1724:

digitised by © National Library of Armenia A.R.A.R.@

հրամանատարը, ում իրանական իշխանութիւններն իրենց հերթին ջանում էին ազգակցական կապերով կապել իրանամէտ վրաց արքայորդու հետ, ռուսական արխիւային փաստաթղթերում նա հանդէս է գալիս որպէս ռուսական կողմնորոշում ունեցող: Մելիք Սահակը դեռեւս 1805 թ. դիմել էր Վրաստանում հաստատուած ռուսական իշխանութիւններին՝ իրեն ու իր հպատակ գիւղացիներին Վրաստանի Ցինցկարոյ անբնակ վայրում տեղ յատկացնելու համար: Այս հարցը դրական լուծում է ստանում[39]: Մելիք Սահակի մասին յիշատակւում է նաեւ կոմս Ի. Գուդովիչի 1807 թ. գեն. մայոր Նեսուեետաեւին ուղղուած յանձնարարականում, որտեղ նշւում է որ Երեւանի մելիքներ Սահակին ու Իբրահիմին (Աբրահամ?) անհրաժեշտ է բնակութեան ու հողամշակութեան վայր տրամադրել Փամբակի դիստանցիայում[40]:

Յետագայ տեղեկութիւններից յայտնի է դառնում, որ, չնայած վերը նշուած ամուսնութեանը, Մելիք Սահակը ռուս-պարսկական 1826-1828 թթ. պատերազմի ընթացքում շարունակել է համագործակցել ռուսների հետ ու անհրաժեշտ տեղեկութիւններ է հաղորդել ռուսական հրամանատարութեանը Երեւանի խանութիւնում գտնուող պարսկական զօրքի վերաբերեալ[41]: 1828 թ. պատերազմից յետոյ ռուսական զօրքի գլխաւոր հրամանատար Ի. Պ. Կրասովսկին իր մի նամակում շեշտում է Ռուսաստանին մատուցած նրա ծառայութիւնները եւ հոգում, որ նա ռուսական տիրապետութեան տակ անցած Երեւանի նահանգ վերադառնալու թոյլտուութիւն ստանայ[42]: Մելիք Սահակն այնուհետեւ ծառայութեան է անցնում Հարաւային Կովկասի շրջանային վարչութիւնում որպէս «ասսեսոր»[43]:

1833 թ. ռուսական պաշտօնեաների նամակագրութեան մէջ որոշակի տեղեկութիւններ կան վերը նշուած ամուսնութիւնից ծնուած 7-ամեայ Հերակլի կրթութիւնը Ս. Պետերբուրգում պետական գանձարանի հաշուին կազմակերպելու եւ թէ՛ նրան, թէ՛ նրա մօրը որպէս վրացական արքայական տոհմի ներկայացուցիչների պետական թոշակ նշանակելու մասին[44]: Մելիք Սահակի նախաձեռնութեամբ արդէն ռուսական տիրապետութեան շրջանում վերանորոգւում է Երեւանի մօտակայքում գտնուող եկեղեցին, որտեղ էլ նա իր մահից յետոյ թաղւում է 1835 թ.[45]:

Այսպիսով, Մատենադարանի դաջարական շրջանի պարսկական հրամանագրերը ուրուագծում են հայ մելիքական իրաւունքների շահարկումը Իրանի դաջարական իշխանութիւնների կողմից քաղաքական նպատակներով: Սակայն միշտ չէ, որ դրանք հարթ ընթացք էին ստանում եւ իրենց նպատակին ծառայում: Եթէ հաշուի առնենք նաեւ այն հանգամանքը, որ 1828 թ. Թուրքմէնչայի պայմանագրի կնքումից յետոյ Երեւանի խանութիւնը դուրս է գալիս իրանական ազդեցութեան գօտուց, ապա ակնյայտ է դառնում, որ այդ թուականից ի վեր նշուած հրամանագրերը կորցնում են իրենց գործառական նշանակութիւնը:

39 *Присоединение Восточной Армении к России*, т. 1, д. 210, с. 659.

40 АКАК, т. III, д. 817, с. 443.

41 *Присоединение Восточной Армении к России*, ред. Ц. Агаян, т. 2, Ереван, 1978, дд. 176, 204, сс. 300, 365.

42 *Присоединение Восточной Армении к России*, т. 2, д. 241, с. 442.

43 **R. Hewsen**, նշ. աշխ., էջ 325:

44 АКАК, т. VIII, Тифлис, 1881, д. 135, 136, с. 216.

45 **R. Hewsen**, նշ. աշխ., էջ 325:

Պատկեր 1: *Մատենադարան, Կաթողիկոսական դիւան, թղթ. 1զ, վաւ. 1024*

digitised by © National Library of Armenia A.R.A.R.@